ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 323

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Դիլիջան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Դիլիջան համայնքի (Դիլիջան քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքը (Դիլիջան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (Դիլիջան քաղաքի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-003-0040-0392 կադաստրային ծածկագրով 0.0081 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր	11-003-0040-0392 կադաստրային ծածկագրով 0.0081 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Դիլիջան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Դիլիջան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի (Դիլիջան քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, « 8 » «հոկտեմբերի» 2025 թ.